

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2021թ. 3-րդ եռամսյակ

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԻՊՈԹԵՐԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԿԵՆՏՐՈՆ



- ✓ ԿԼԻՄԱ
- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐ

- ✓ ՍՏՈՐԵԿՐՅԱ ԶՐԵՐ
- ✓ ԱՆՏԱՌՆԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	4
1. ԿԼԻՄԱ.....	7
2. ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.....	13
3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	19
Երևան.....	20
Գյումրի.....	23
Վանաձոր.....	25
Ալավերդի.....	26
Հրազդան.....	30
Արարատ.....	33
Կապան.....	34
Քաջարան.....	35
Չարենցավան.....	36
Ծաղկաձոր.....	37
«Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր».....	41
4. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՋՐԵՐ.....	43
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք.....	44
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	49
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք.....	54
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	60
Սևանա լիճ.....	64
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	75
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	80
Ջրամբարներ.....	83
Արաքս գետ.....	87
5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ.....	91
6. ԱՆՏԱՌՆԵՐ.....	93
Հավելված 1. Միջին ամսական և տասնօրյակային ջերմաստիճաններն ու շեղումները 1961-1990թթ. համապատասխան նորմաներից 2021 թվականի 3-րդ եռամսյակում.....	103
Հավելված 2. Ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանները 2021 թվականի 3-րդ եռամսյակում.....	104
Հավելված 3. Գետերի ջրերի որակը 2021 թվականի 3-րդ եռամսյակում.....	106
Հավելված 4. Դիտակետերի տեղադրության ցանկ.....	132
Հավելված 5. Ցուցանիշների ցանկ.....	148
Հավելված 6. Նորմերի և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկ.....	150

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Վտանգավոր օդերևութաբանական երևույթները 2021թ. Հունիս	14
Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթները 2021թ. Օգոստոս.....	16
Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթները 2021թ. Սեպտեմբեր	18
Աղյուսակ 4. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.	40
Աղյուսակ 5. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.....	42
Աղյուսակ 6. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.	44
Աղյուսակ 7. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	49
Աղյուսակ 8. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.	54
Աղյուսակ 9. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	60
Աղյուսակ 10. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2021 թվականի 3-րդ եռամսյակում.....	64
Աղյուսակ 11. Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները 2021 թվականի 3-րդ եռամսյակում.....	69
Աղյուսակ 12. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	75
Աղյուսակ 13. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.....	80
Աղյուսակ 14. Ջրամբարների ջրալցվածությունը.	83
Աղյուսակ 15. Ջրամբարների ջրի որակը 2021թ. 3-րդ եռամսյակում.	85
Աղյուսակ 16. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2021 թվականի 3-րդ եռամսյակում.....	88
Աղյուսակ 17. Ապօրինի հատման օջախների թիվ.....	93

Հապավումներ

ՍԹԿ	սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՋԿՏ	ջրավազանային կառավարման տարածք
ԸԱԱ	ընդհանուր անօրգանական ազոտ
ԸԼԱ	ընդհանուր լուծված աղեր
ԿՆ	կախյալ նյութեր
ԹԿՊ ₅	թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջ
ԹՔՊ	թթվածնի քիմիական պահանջ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021 թվականի 3-րդ եռամսյակի տեղեկագրում ներկայացված են կլիմայական նկարագրության, եղանակային երևույթների, մթնոլորտային օդի որակի, մթնոլորտային տեղումների որակի և քանակի, մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի և քանակի, անտառների մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդերևութաբանական դիտարկումներ կատարվում են հանրապետության տարածքի 47 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում: Դիտարկումներն իրականացվում են Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 3 ժամը մեկ անգամ՝ սկսած ժամը 00:00-ից (Գրինվիչի ժամանակով), մթնոլորտային երևույթների և եղանակի վիճակի վերաբերյալ իրականացվում են շուրջօրյա դիտարկումներ: Կատարվում են դիտարկումներ օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ, ինչպիսիք են՝ օդի և հողի ջերմաստիճանը, մթնոլորտային ճնշումը, քամու ուղղությունը և արագությունը, օդի խոնավությունը, տեղումների քանակը, ամպամածության ձևը և քանակը, հորիզոնական տեսանելիությունը, մթնոլորտային երևույթները և այլ: Նորմաները հաշվարկված են բազմամյա դիտարկումների հիման վրա:

Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 91 դիտակետ Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի վրա, որոնցում կատարվում են ամենօրյա դիտարկումներ ջրի և օդի ջերմաստիճանի, ջրի մակարդակի, սառցային երևույթների դիտարկումներ և ջրի ելքի չափումներ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի գետերի, ջրամբարների, Արփա-Սևան, Որոտան-Կեչուտ ջրատարի և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական ավելի քան 45 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտակետերի ցանկը հաստատվել է համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունիսի 15-ի N212-Լ հրամանի:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված են Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի 109 ստորերկրյա ջրաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի/ճնշման և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Տարեկան 2 անգամ կատարվում է նաև ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ 40 ջրաղբյուրում, որոնցից յուրաքանչյուրում որոշվում է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, մետաղներ, աղային ռեժիմի տարրեր): Ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2002 թ. դեկտեմբերի 25-ի N876-Ն հրամանի:

Հողերի՝ մետաղներով և այլ տարրերով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվում են ինչպես հղումային տարածքներում, որտեղ առկա են մարդածին նվազագույն ազդեցություններ, այնպես էլ հանքարդյունաբերական տարածքներում: Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվար 25-ի N01-Ն հրամանի համաձայն:

Կոմունալ աղբավայրերի հարակից տարածքներում կայուն օրգանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար կատարվում են հողի նմուշառումներ: Յուրաքանչյուր նմուշում որոշվում են մինչև 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ: Կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի 2021թ. տարեկան տեղեկագրում:

Տեղեկագրում ներկայացված են նաև միջազգային կոնվեցիաներով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում կատարվող աշխատանքների արդյունքները:

▪ «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման մոնիթորինգի և գնահատման» (EMEP) ծրագրի շրջանակներում ՀՀ-ում գործում է մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի առաջին մակարդակի տարածաշրջանային դիտակայան (Ամբերդի դիտակայան): Դիտակայանի մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների որակի մոնիթորինգի արդյունքները ներկայացվում են ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի քիմիական կոորդինացիոն կենտրոն՝ անդրսահմանային օդի աղտոտվածության տվյալների միասնական համակարգի (EBAS) միջոցով, որը գործում է Նորվեգիայի օդի հետազոտության ինստիտուտի ներքո: Մոնիթորինգի և արտանետումների տվյալների հիման վրա Նորվեգիայի օդերևութաբանական ինստիտուտի կողմից կատարվում է օդի անդրսահմանային աղտոտման մոդելավորում և պատրաստվում է Հայաստանի Հանրապետության համար տարեկան զեկույց:



▪ Հայաստանի Հանրապետությունը Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ իրականացնում է սահմանային Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների դիտարկումներ Արաքս գետի աղտոտվածության վիճակը գնահատելու նպատակով: Պարբերաբար երկու երկրների միջև տեղի է ունենում հանդիպումներ՝ արդյունքների քննարկման և տվյալների փոխանակման նպատակով:

Մակերևութային, ստորերկրյա ջրերի որակի և
քանակի, մթնոլորտային օդի որակի,
հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի դիտացանց



1. ԿԼԻՄԱ

2021 թվականի ամռանը եղել է նորմայից տաք. միջին ջերմաստիճանը կազմել է 18:2 °C, ինչը բարձր է նորմայից (15.7°C) 2.5 աստիճան:




Ամռան երեք ամիսներին էլ գրանցվել են բարձր ջերմաստիճաններ, ամսական միջին ջերմաստիճանների շեղումները նորմայից համապատասխանաբար կազմել է 4.2°C հունիսին, 1.3 °C՝ հուլիսին և 2.0 °C՝ օգոստոսին:

Տեղումների քանակը կազմել է նորմայի (148 մմ) 70%: Հատկապես չորային է եղել հունիս ամիսը, երբ տեղումների քանակը կազմել է նորմայի (71 մմ) 27 %: Խոնավ է եղել հուլիս ամիսը. դիտվել է ամսվա նորմայի (44 մմ) 120 %: Օգոստոսին տեղումների քանակը եղել է նորմային մոտ՝ բացասական շեղումով:

Օդի ջերմաստիճանի բնութագիրը
Ամառ 2021





Տեղումների բնութագիրը
Ամառ 2021




Կլիմայի փոփոխության գնահատականները

Հայաստանի տարածքում 1935-2021թթ. ընթացքում ամառային միջին ջերմաստիճանը աճել է 1.8°C-ով, իսկ տեղումներն այդ ընթացքում նվազել են շուրջ 30 %:




Կլիմայական ինդեքսներ

Ամառային օրերի թիվը (Su25 ինդեքս՝ օրերի թիվը տարվա ընթացքում, երբ առավելագույն ջերմաստիճանը 25°C-ից բարձր է) 2021թ. ամռանը նորմայից (1961-1990թթ) ավել է եղել միջինում 23 օր, առավելագույն շեղումը եղել է Դիլիջանում՝ 41 օր:




Արեգակնային ճառագայթում

Կարճալիք ճառագայթման բաշխումը:




Կարճալիք ճառագայթման արբանյակային տվյալների քարտեզների վերլուծությունից երևում է, որ հունիս ամսին ճառագայթման առավելագույն արժեքը գրանցվել է Հանրապետության արևմտյան և կենտրոնական շրջաններում 250 Վտ/մ², նվազագույն արժեքները՝ արևելյան կեսում՝ 150 Վտ/մ²: Հուլիսին հանրապետության հյուսիսային և հարավային շրջաններում գրանցվել է միջինում 121-137 Վտ/մ², առավելագույն արժեքներ գրանցվել են Արարատյան դաշտում՝ մինչև 210 Վտ/մ²: Օգոստոսին հիմնականում կարճալիք ճառագայթման արժեքները տատանվել են 130-170 Վտ/մ², բացառությամբ հարավային և կենտրոնական առանձին շրջանների, որտեղ առավելագույն արժեքները հասել են մինչև 190 Վտ/մ²:

Ստորև ներկայացվում է մակերևույթի կարճալիք ճառագայթման տվյալները՝ ըստ EUMETSAT-ի կողմից գործածվող CM-SAF արբանյակի ՀՀ օդերևութաբանական կայանների համար՝ ըստ կայանների և ըստ բարձրությունների:




Տարբեր բարձրություններում գրանցված կարճալիք ճառագայթման արժեքները ըստ արբանյակային դիտարկումների



Օդերևութաբանական կայաններում գրանցված կարճալիք ճառագայթման արժեքները ըստ արբանյակային դիտարկումների


Ջերմային ալիքով օրերի թիվը 2021թ. ամռանը

2021թ. ամռանը տաք ալիք դիտվել է հունիսի 15-30-ը, հուլիսի 1-6, հուլիսի 19-21, օգոստոսի 5-10-ը, 27-31-ը: Հունիսին դիտված ալիքի տևողությունը եղել է բավական երկար՝ 15 օր: Առավելագույն ջերմաստիճանի առավելագույն շեղումը նորմայից կազմել է 14.9 °C, միջին ջերմաստիճանի առավելագույն շեղումը նորմայից՝ 19.1 °C:



Քամու բաշխումը

Ամռան սեզոնին քամու միջին արագությունը գրանցվել է հիմնականում նորմայի սահմաններում: Մինչև 1000մ բարձրություններում քամու արագության շեղումը եղել է 0.3-0.5 մ/վ, 1000-2000մ բարձրություններում շեղումը աննշան է, իսկ ահա 2000-2500 և 2500մ-ից բարձր շրջաններում քամու արագության շեղումը կազմել է համապատասխանաբար 0.6 մ/վ և 0.7 մ/վ:




Երաշտային պայմաններ

2021 թվականի ամռանը երաշտային պայմանների ինտենսիվության մոնիթորինգ իրականացվել է 33 կայանների տվյալներով, որոնք բնութագրական են ողջ տարածքի համար:

Հովտային շրջանների բոլոր կայաններում ամբողջ ամռան ընթացքում դիտվել է 1-ին կարգի (շատ ուժեղ) երաշտ:

Նախալեռնային շրջաններում դիտվել է 1-ին (շատ ուժեղ) և 2-րդ կարգի (ուժեղ) երաշտ, Լոռվա և Շիրակի մեծ մասի և Գեղարքունիքի արևելյան շրջաններում երաշտը եղել է համեմատաբար թույլ: Թույլ երաշտ է դիտվել նաև հյուսիսային բարձր լեռնային շրջաններում, ի տարբերություն հարավային և կենտրոնական լեռնային շրջանների, որտեղ դիտվել է 1-ին կարգի երաշտ:




Երևան

Հունիսին միջին ամսական ջերմաստիճանը եղել է 27 °C, ինչը գերազանցել է նորման (22.6°C) 4.4°C: Այն ամենատաք հունիսն էր դիտարկումների ողջ ժամանակաշրջանում: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է 41.1°C (հունիսի 24-ին), որը գերազանցել է երբևէ գրանցված բացարձակ առավելագույն արժեքը (41°C 2016թ.): Հունիսի 16-27-ը


Ժամանակամիջոցում դիտված առվելագույն ջերմաստիճանը գերազանցեց տվյալ օրերի երբևէ գրանցված առավելագույն արժեքները: Իսկ նվազագույնները երբևէ դիտված նվազագույններից բարձր են եղել 8-18°C: Դիտվել է 1,3 մմ անձրև, որը կազմել է տեղումների նորմայի (24 մմ) 5% -ը:

Հուլիսին միջին ջերմաստիճանը եղել է 27.5°C, ինչը նորմայի (27.1°C) սահմաններում է՝ դրական շեղումով: Հուլիսի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը գերազանցել է նորման՝ առավելագույն շեղումը դիտվել է հուլիսի 4-ին՝ 7.4°C: Ամսվա երկրորդ տասնօրյակում դիտվել է ջերմաստիճանի մեծ տատանումներ՝ թե՛ կտրուկ նվազում՝ նորմայից մինչև 6°C, և թե՛ նույնքան բարձրացում: Հուլիսին դիտվել է 23 մմ անձրև, տեղումների քանակը կազմել է նորմայի (17մմ) 134%:

Օգոստոս ամսվա միջին ջերմաստիճանը եղել է 27.9°C, նորման 26.9°C, շեղումը նորմայից կազմում է +1.2°C: Օգոստոսին դիտվել է 3 մմ անձրև, տեղումների քանակը կազմել է նորմայի (10մմ) 28 %:



Առավելագույն նվազագույն միջին ջերմաստիճանների բաշխումը



Տեղումների գումարային քանակը և շեղումը նորմայից

2. ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հուլիս

Հուլիս ամսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում նորմայից բարձր է եղել 1-2 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին տասնօրյակում նորմայից բարձր է եղել 2-3. երկրորդ և երրորդ տասնօրյակում՝ 1 աստիճանով:


Միջին առավելագույն ջերմաստիճանը կազմել է. Տավուշում +26.9...+30.8°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +25.7°C, նախալեռնային շրջաններում՝ +35.5°C, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ +25.6...+26.0°C, հովտային շրջաններում՝ +31.9...+33.9°C, Շիրակում՝ +23.9...+29.3°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +26.1...+26.6°C, նախալեռնային շրջաններում՝ +31.4°C, Լոռիում՝ +23.0...+26.5°C, Գեղարքունիքում՝ +19.0...+24.8°C, Արմավիրում՝ +34.9°C, Արարատում՝ +33.9...+35.4°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +28.7...+34.1°C, լեռնային շրջաններում՝ +23.7...+24.9°C, Երևան քաղաքում՝ +33.9...+34.9°C (Հավելված 1):

Միջին նվազագույն ջերմաստիճանը կազմել է. Տավուշում +13.9...+19.6°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +11.7°C, նախալեռնային շրջաններում՝ +21.5°C, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ +13.2...+15.5°C, հովտային շրջաններում՝ +19.0...+22.7°C, Շիրակում՝ +9.6...+14.6°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +12.5...+14.4°C, նախալեռնային շրջաններում՝ +18.5°C, Լոռիում՝ +11.8...+15.9°C, Գեղարքունիքում՝ +10.5...+13.8°C, Արմավիրում՝ +17.6°C, Արարատում՝ +19.1...+21.6°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +16.7...+19.6°C, լեռնային շրջաններում՝ +10.2...+14.5°C, Երևան քաղաքում՝ +20.1...+21.4°C (Հավելված 1):

Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են. Տավուշում +35...+38°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +33°C, նախալեռնային շրջաններում՝ +41°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +38...+40°C, նախալեռնային շրջաններում՝ +32...+33°C, Շիրակում՝ +32...+36°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +32...+33°C, նախալեռնային շրջաններում՝ +38°C, Լոռիում՝ +31...+35°C, Գեղարքունիքում՝ +28...+32°C (Սեմյոնովկա +26°C), Արմավիրում և Արարատում՝ +40...+41°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +35...+40°C, լեռնային շրջաններում՝ +30...+32°C, Երևան քաղաքում՝ +40...+41°C (Հավելված 2):

Ամսվա ամենացածր ջերմաստիճանները դիտվել են. Տավուշում +11...+16°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +8°C, նախալեռնային շրջաններում՝ +16°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +15...+17°C, նախալեռնային շրջաններում՝ +9...+11°C, Շիրակում՝ +10...+11°C (Աշոցքում՝ +4°C), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +10...+11°C, նախալեռնային շրջաններում՝ +15°C, Լոռիում՝ +9...+13°C (Տաշիրում՝ +7°C), Գեղարքունիքում՝ +7...+11°C, Արմավիրում՝ +12°C, Արարատում՝ +14...+17°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +14...+16°C, լեռնային շրջաններում՝ +6...+10, Երևան քաղաքում՝ +16...+17°C (Հավելված 2):

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 110-130%, Վայոց Ձորում՝ 23-31%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 27-58%, հովտային շրջաններում՝ 3-90%, Շիրակում՝ 59-132%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 146-253%, նախալեռնային շրջաններում՝ 124%, Լոռիում՝ 94-108%, Գեղարքունիքում՝ 70-139%, Արմավիրում՝ 176%, Արարատում՝ 323-563%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 86-107%, լեռնային շրջաններում՝ 114-159%, Երևան քաղաքում՝ 189-357%:



Հուլիսի 2-ին, 13-ին, 19-ին Իջևանում դիտվել է ուժեղ քամի պողոթնումների ժամանակ համապատասխանաբար 25մ/վ, 27մ/վ, 25մ/վ արագությամբ, 22-ին՝ Արմավիրում՝ պողոթնումների ժամանակ՝ 30մ/վ արագությամբ, առանձին օրեր առանձին վայրերում դիտվել է քամի 15-20մ/վ արագությամբ, պողոթնումներում՝ 18-23մ/վ արագությամբ:

Հուլիսի 2-ին Ֆանտանում դիտվել է ուժեղ անձրև՝ 30մմ/12ժամ, 14-ին՝ Երևանի Աերոլոգիական կայանում և Ֆանտանում, համապատասխանաբար 33մմ/12ժամ և 30մմ/12ժամ:

Աղյուսակ 1. Վտանգավոր օդերևութաբանական երևույթները 2021թ. հուլիս

Մարզ / դիտակայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանում	Բնութագիր	Չափանիշ/Չափորոշիչ	Փաստացի
Գոտայք/Ֆանտան	2	ուժեղ անձրև	ինտենսիվություն	≥30մմ/12ժամ	30մմ
Տավուշ/Իջևան	2	ուժեղ քամի	արագություն	≥25մ/վ	25մ/վ
Արարատ/Արարատ	4	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+40.1°C
Գոտայք/Հրազդան	4	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+33.0°C
Գոտայք/Եղվարդ	4	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+35.0°C	+36.3°C
Շիրակ/Արթիկ	4	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.5°C
Տավուշ/Իջևան	13	ուժեղ քամի	արագություն	≥25մ/վ	27մ/վ
Երևան/Աերոլոգիական	14	ուժեղ անձրև	ինտենսիվություն	≥30մմ/12ժամ	33մմ
Գոտայք/Ֆանտան	15	ուժեղ անձրև	ինտենսիվություն	≥30մմ/12ժամ	30մմ
Տավուշ/Իջևան	19	ուժեղ քամի	արագություն	≥25մ/վ	25մ/վ
Տավուշ/Դիլիջան	19	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+35.0°C	+35.4°C
Գոտայք/Եղվարդ	19	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+35.0°C	+35.5°C
Շիրակ/Արթիկ	19	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.0°C
Սյունիք/Մեղրի	19	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+40.2°C
Լոռի/Օձուն	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+35.0°C	+35.0°C
Գոտայք/Եղվարդ	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+35.0°C	+35.6°C
Շիրակ/Գյումրի	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+35.0°C	+35.7°C
Շիրակ/Արթիկ	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+33.1°C
Գոտայք/Հրազդան	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.5°C
Գոտայք/Ֆանտան	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.0°C
Արարատ/Արարատ	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+41.0°C
Երևան/Աերոլոգիական	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+40.0°C
Վայոց Ձոր/Արենի	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+40.3°C
Վայոց Ձոր/Ջերմուկ	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.6°C
Սյունիք/Մեղրի	20	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+40.1°C
Արմավիր/Մերձավան	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+40.8°C
Շիրակ/Արթիկ	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+33.8°C
Արարատ/Ուրգաձոր	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+40.0°C
Արագածոտն/Աշտարակ	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+40.0°C	+40.0°C

Մարզ / դիտակայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանում	Բնութագիր	Չափանիշ/Չափորոշիչ	Փաստացի
Կոտայք/Եղվարդ	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	$\geq +35.0^{\circ}\text{C}$	$+37.5^{\circ}\text{C}$
Արագածոտն/Թային	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	$\geq +35.0^{\circ}\text{C}$	$+35.0^{\circ}\text{C}$
Արարատ/Արարատ	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	$\geq +40.0^{\circ}\text{C}$	$+41.3^{\circ}\text{C}$
Արարատ/Արտաշատ	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	$\geq +40.0^{\circ}\text{C}$	$+40.6^{\circ}\text{C}$
Երևան/Ակերոլզիական	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	$\geq +40.0^{\circ}\text{C}$	$+40.0^{\circ}\text{C}$
Վայոց Ձոր/Արենի	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	$\geq +40.0^{\circ}\text{C}$	$+40.9^{\circ}\text{C}$
Վայոց Ձոր/Զեյրմուկ	21	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	$\geq +32.0^{\circ}\text{C}$	$+32.2^{\circ}\text{C}$
Արմավիր/Արմավիր	22	ուժեղ քամի	արագություն	$\geq 25\text{մ/վ}$	30մ/վ

Օգոստոս

Օգոստոս ամսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում նորմայից բաձր է եղել 2-3 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին տասնօրյակում նորմայից բաձր է եղել 1-3. երկրորդ տասնօրյակում՝ 1-2. երրորդ տասնօրյակում՝ 3-4 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը կազմել է. Տավուշում $+29.9...+33.9^{\circ}\text{C}$, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ $+27.4^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+35.6^{\circ}\text{C}$, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ $+27.4...+27.9^{\circ}\text{C}$, հովտային շրջաններում՝ $+33.7...+35.6^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+25.0...+30.3^{\circ}\text{C}$, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ $+28.0...+28.3^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+32.5^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+25.2...+28.6^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+21.5...+26.0^{\circ}\text{C}$, Արմավիրում՝ $+34.5^{\circ}\text{C}$, Արարատում՝ $+35.2...+36.1^{\circ}\text{C}$, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ $+29.5...+34.8^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+25.3...+26.7^{\circ}\text{C}$, Երևան քաղաքում՝ $+34.6...+35.6^{\circ}\text{C}$ (Հավելված 1):


Միջին նվազագույն ջերմաստիճանը կազմել է. Տավուշում $+12.5...+19.5^{\circ}\text{C}$, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ $+11.3^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+20.4^{\circ}\text{C}$, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ $+10.6...+14.8^{\circ}\text{C}$, հովտային շրջաններում՝ $+17.1...+22.8^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+8.9...+14.7^{\circ}\text{C}$, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ $+12.5...+14.5^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+19.1^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+10.1...+14.2^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+9.1...+14.5^{\circ}\text{C}$, Արմավիրում՝ $+16.9^{\circ}\text{C}$, Արարատում՝ $+18.5...+20.1^{\circ}\text{C}$, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ $+16.8...+19.7^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+10.2...+15.0^{\circ}\text{C}$, Երևան քաղաքում՝ $+19.3...+22.2^{\circ}\text{C}$ (Հավելված 1):

Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են. Տավուշում $+33...+36^{\circ}\text{C}$, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ $+31^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+40^{\circ}\text{C}$, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ $+36...+39^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+31...+32^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+30...+35^{\circ}\text{C}$, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ $+32...+33^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+36^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+28...+32^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+26...+31^{\circ}\text{C}$, Արմավիրում և Արարատում՝ $+37...+39^{\circ}\text{C}$, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ $+33...+38^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+29...+30^{\circ}\text{C}$, Երևան քաղաքում՝ $+38...+39^{\circ}\text{C}$: (Հավելված 2):

Ամսվա ամենացածր ջերմաստիճանները դիտվել են. Տավուշում $+15...+17^{\circ}\text{C}$ (Դիլիջանում՝ $+9^{\circ}\text{C}$), Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ $+8^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+18^{\circ}\text{C}$, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ $+14...+19^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+8...+11^{\circ}\text{C}$, Շիրակում՝ $+10...+11^{\circ}\text{C}$ (Աշոցքում՝ $+4^{\circ}\text{C}$), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ $+10...+12^{\circ}\text{C}$, նախալեռնային շրջաններում՝ $+17^{\circ}\text{C}$, Լոռիում՝ $+6...+10^{\circ}\text{C}$, Գեղարքունիքում՝ $+7...+12^{\circ}\text{C}$, Արմավիրում՝ $+13^{\circ}\text{C}$, Արարատում՝ $+16...+17^{\circ}\text{C}$, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ $+14...+16^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+7...+12^{\circ}\text{C}$, Երևան քաղաքում՝ $+15...+18^{\circ}\text{C}$: (Հավելված 2):

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 13.9-63.8%, Վայոց Ձորում՝ 44.4-66.9%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 72.5-80.0%, հովտային

շրջաններում՝ 50.0-126.7%, Շիրակում՝ 78.1-176.7%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 48.2-118.8%, նախալեռնային շրջաններում՝ 20.0%, Լոռիում՝ 102.3-140.7%, Գեղարքունիքում՝ 54.5-117.9%, Արմավիրում՝ 6.3%, Արարատում՝ 11.2-116.7%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 49.5-170.9%, լեռնային շրջաններում՝ 58.2-93.0%, Երևան քաղաքում՝ 11.1-85.6%:



Օգոստոսի 9-ին Ապարան լճային օդերևութաբանական կայանում դիտվել է ուժեղ անձրև՝ 30մմ/12ժամ տևողությամբ:

Առանձին օրեր առանձին վայրերում դիտվել է քամի 15-20մ/վ արագությամբ, պտոթկումներում՝ 18-22մ/վ արագությամբ:

Աղյուսակ 2. Վտանգավոր օդերևութաբանական երևույթները 2021թ. օգոստոս

Մարզ / դիտակայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանում	Բնութագիր	Զախանիշ/ Զախորոշիչ	Փաստացի
Արագածոտն/Ապարան լճային	9	ուժեղ անձրև	ինտենսիվություն	≥30մմ/12ժամ	30մմ
Կոտայք/Եղվարդ	10	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+35.0°C	+35.0°C
Կոտայք/Ֆանտան	10.30.31	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.0°C
Շիրակ/Արթիկ	10.31	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.1°C
Շիրակ/Արթիկ	29	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.4°C
Կոտայք/Հրազդան	29	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.0°C
Շիրակ/Արթիկ	30	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.6°C
Կոտայք/Հրազդան	30	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+33.0°C
Կոտայք/Հրազդան	31	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+32.0°C	+32.5°C
Կոտայք/Եղվարդ	31	սաստիկ շոգ	աստիճան ցելսիուս	≥+35.0°C	+35.5°C

Մեպտեմբեր

Մեպտեմբեր ամսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում նորմայից բարձր է եղել 0.5-1.5 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանը առաջին տասնօրյակում նորմայից բարձր է եղել 1. երկրորդ տասնօրյակում՝ 2-3. երրորդ տասնօրյակում նորմայից ցածր է եղել 0.5-1.5 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը կազմել է. Տավուշում +22.6...+25.4°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +23.3°C, նախալեռնային շրջաններում՝ +30.0°C, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ +20.7...+22.3°C, հովտային շրջաններում՝ +26.5...+29.1°C, Շիրակում՝ +19.7...+24.6°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +22.5...+23.3°C, նախալեռնային շրջաններում՝ +26.4°C, Լոռիում՝ +18.7...+23.3°C,


Գեղարքունիքում՝ +15.8...+21.3°C, Արմավիրում՝ +28.8°C, Արարատում՝ +29.8...+30.1°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +23.4...+29.0°C, լեռնային շրջաններում՝ +19.6...+21.4°C, Երևան քաղաքում՝ +28.6...+29.5°C: (Հավելված 1):

Միջին նվազագույն ջերմաստիճանը կազմել է. Տավուշում +10.1...+14.5°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +7.3°C, նախալեռնային շրջաններում՝ +14.2°C, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ +8.0...+10.6°C, հովտային շրջաններում՝ +14.1...+17.8°C, Շիրակում՝ +4.0...+9.0°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +7.8...+9.9°C, նախալեռնային շրջաններում՝ +13.7°C, Լոռիում՝ +7.7...+11.4°C, Գեղարքունիքում՝ +6.2...+10.2°C, Արմավիրում՝ +11.3°C, Արարատում՝ +13.2...+14.9°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +11.6...+14.3°C, լեռնային շրջաններում՝ +4.9...+10.1°C, Երևան քաղաքում՝ +13.7...+15.4°C (Հավելված 1):

Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են. Տավուշում +34...+36°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +31°C, նախալեռնային շրջաններում՝ +37°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +38...+41°C, նախալեռնային շրջաններում՝ +32...+34°C, Շիրակում՝ +28...+33°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +29...+32°C, նախալեռնային շրջաններում՝ +34°C, Լոռիում՝ +28...+33°C (Տաշիրում՝ +27°C), Գեղարքունիքում՝ +26...+30°C, Արմավիրում և Արարատում՝ +37...+40°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +31...+36°C, լեռնային շրջաններում՝ +27...+29°C, Երևան քաղաքում՝ +37°C (Հավելված 2):

Ամսվա ամենացածր ջերմաստիճանները դիտվել են. Տավուշում +2...+7°C, Վայոց Ձորում՝ լեռնային շրջաններում՝ +1°C, նախալեռնային շրջաններում՝ +6°C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +6...+11°C, նախալեռնային շրջաններում՝ 0...+5°C, Շիրակում՝ -4...+1°C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 0...+4°C, նախալեռնային շրջաններում՝ +6°C, Լոռիում՝ 0...+4°C (Տաշիրում՝ -2°C), Գեղարքունիքում՝ 0...+4°C (Գավառում՝ -2°C, Շորժայում՝ +6°C), Արմավիրում՝ +4°C, Արարատում՝ +5...+7°C, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ +5...+6°C, լեռնային շրջաններում՝ -1...+3°C, Երևան քաղաքում՝ +6...+8°C (Հավելված 2):

Ամսական տեղումների քանակը կազմել է. Տավուշում նորմայի 83-133%, Վայոց Ձորում՝ 7-40%, Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 21-60%, հովտային շրջաններում՝ 0-15%, Շիրակում՝ 68-132%, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 110-112%, նախալեռնային շրջաններում՝ 139%, Լոռիում՝ 126-201%, Գեղարքունիքում՝ 41-139%, Արմավիրում՝ 62%, Արարատում՝ 107-155%, Արագածոտնում՝ նախալեռնային շրջաններում՝ 79-84%, լեռնային շրջաններում՝ 31-177%, Երևան քաղաքում՝ 130-200%:



Սեպտեմբերի 13-ին Վանաձորում դիտվել է ուժեղ մառախուղ՝ 50մ տեսանելիությամբ:

Առանձին օրեր առանձին վայրերում դիտվել է քամի 17-22մ/վ արագությամբ, պոռթկումներում՝ 19-24մ/վ արագությամբ:

Աղյուսակ 3. Վտանգավոր օդերևութաբանական երևույթները 2021թ. սեպտեմբեր

Մարզ / դիտակայան	Դիտման օրը(երը)	Երևույթի անվանում	Չափանիշ/ Չափորոշիչ	Փաստացի
Տավուշ/Դիլիջան	2	սաստիկ շոգ	$\geq +35.0^{\circ}\text{C}$	$+36.2^{\circ}\text{C}$
Արարատ/Արարատ	2	սաստիկ շոգ	$\geq +40.0^{\circ}\text{C}$	$+40.0^{\circ}\text{C}$
Սյունիք/Մեղրի	2	սաստիկ շոգ	$\geq +40.0^{\circ}\text{C}$	$+40.8^{\circ}\text{C}$
Լոռի/Վանաձոր	13	ուժեղ մառախուղ	$\leq 50\text{մ}$	50մ

3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ


Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին: Աղտոտման հիմնական պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ՝ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում,
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:


Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ, որոնք իրենց մեջ պարունակում են ծանր մետաղներ:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2021 թվականի 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ: Քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:


2021 թվականի 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան գերազանցել է հիմնականում Երևան, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան և Արարատ քաղաքներում: Փոշով աղտոտվածությունը կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:



2021 թվականի 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն: Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:



2021 թվականի 3-րդ եռամսյակում մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՄԹԿ-ն Վանաձոր քաղաքում՝ աննշան, իսկ մնացած քաղաքներում ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները հուլիս և օգոստոս ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:



Երևան





Երևան քաղաքում կատարվում են փոշու*, ծծմբի երկօքսիդի**, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

2021 թվականի 3-րդ եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան հուլիսին գերազանցել է համապատասխան ՄԹԿ-ն 1.15 անգամ, օգոստոսին՝ 1.01 անգամ: Սեպտեմբեր ամսին մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան չի գերազանցել համապատասխան ՄԹԿ-ն: Ածխածնի մոնօքսիդի, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները, սակայն ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվել են որոշակի գերազանցումներ:


*կախված մասնիկներ

**անհիդրիդ ծծմբային


Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Գլուխ

Գյումրի քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է մեկ անշարժ դիտակայան և 24 շաբաթական դիտակետ:

2021 թվականի 3-րդ եռամսյակում Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ:

2021 թվականի 3-րդ եռամսյակում Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան հուլիսին գերազանցել է համապատասխան ՍԹ-ն 1.1 անգամ, օգոստոսին՝ 1.04 անգամ: Սեպտեմբեր ամսին մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն: Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն, իսկ սեպտեմբեր ամսին գերազանցել է աննշան՝ 0.0514 մգ/մ³ (ՍԹ=0.05մգ/մ³): Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն:

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների կոնցենտրացիաների փոփոխությունները.






Ալավերդի

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում են երեք անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ:



2021 թվականի 3-րդ եռամսյակում Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան հուլիս և սեպտեմբեր ամիսներին գերազանցել են համապատասխան ՍԹ-ն 1.1 անգամ: Օգոստոս ամսին մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պարմանական նշաններ




- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- == Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրեր




Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)



Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)






- Պայմանական նշաններ
- | | |
|---|----------------------------------|
|  | Պասիվ նմուշառման
ընտակետեր |
|  | Ակտիվ նմուշառման
ընտակայաններ |
|  | Գետային ցանց |
|  | Ճանապարհներ
և փողոցներ |
|  | Միջպետական
ճանապարհ |
|  | Երկաթգծեր |
|  | Բնակավայրեր |

Հրազդան




Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետեր:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան օգոստոսին գերազանցել է համապատասխան 1.5 անգամ, սեպտեմբեր՝ 1.1 անգամ: Հուլիս ամսին մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան չի գերազանցել համապատասխան ՍԹ-ն: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները:


Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



**Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**






Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




Պայմանական նշաններ

- | | | | |
|--|-------------------------------|--|--------------------|
| | Պասիվ նմուշառման դիտակետեր | | Գետային ցանց |
| | Ակտիվ նմուշառման դիտակայաններ | | Բնակավայրեր |
| | Ճանապարհներ և փողոցներ | | Աղբյուրակ, ջրամբար |
| | Երկաթգծեր | | |

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



Պայմանական նշաններ




- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- Աղբյուրակ, ջրամբար

Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:

2021 թվականի 3-րդ եռամսյակում Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:

2021 թվականի 3-րդ եռամսյակում Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2021 թվականի 3-րդ եռամսյակում Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2021 թվականի 3-րդ եռամսյակում Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:



2021 թվականի 3-րդ եռամսյակում Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները*:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.




*ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշման 3-րդ կետի կամաձայն զբոսաշրջային կենտրոններում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների արժեքներն ընդունվում են տվյալ նյութի 0.8 սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի չափով

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ($մգ/մ^3$)




**Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




Պայմանական նշաններ

- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրեր



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



Մթնոլորտային տեղումների որակ

2021 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է մթնոլորտային տեղումների 6 նմուշ (անձրև): Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 4-ում: 3-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 4. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ցուցանիշ					
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
14.07-15.07.2021	5.96	22.0	1.727	0.265	1.914	1.298
15.07-16.07.2021	6.19	22.7	1.878	0.229	1.735	1.346
23.07-24.07.2021	6.34	32.5	2.895	0.547	2.961	1.804
28.07-29.07.2021	6.31	18.0	1.313	0.259	1.521	0.896
12.08-13.08.2021	6.65	49.4	2.668	0.938	2.559	1.872
26.09-27.09.2021	6.74	35.6	2.779	0.455	2.115	0.521



**Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման
մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր**

Մթնոլորտային օդ

Ամբերդի կայանում 2021 թվականի 3-րդ եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդի և փոշու դիտարկումներ: Մթնոլորտային օդի նմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու նմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ազոտի երկօքսիդի ($U\theta_{\text{միջ}}=0.04\text{մգ/մ}^3$) և ամոնիակի ($U\theta_{\text{միջ}}=0.04\text{մգ/մ}^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել $U\theta$ -ները:

*Մթնոլորտային օդում ամոնիակի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների
փոփոխությունները.*



Մթնոլորտային տեղումների որակ

2021 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 8 նմուշ (անձրև): Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 5-ում: 3-րդ եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 5. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ցուցանիշ					
	Ջրածնային ցուցիչ (pH)	Էլեկտրահաղոր- դականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
07.07.2021	6.669	79.9	7.53	1.58	18.00	0.60
13.07-14.07.2021	6.742	49.2	3.62	0.68	5.92	1.68
14.07-15.07.2021	6.621	24.3	2.13	0.30	3.13	1.67
22.07-23.07.2021	6.301	46.7	3.43	0.45	8.32	4.01
27.07.2021	6.472	57.5	4.50	0.70	13.34	2.71
14.08.2021	7.563	111.4	0.84	0.47	0.07	0.46
21.08.2021	5.925	33.9	2.65	0.54	8.10	0.58
24.09.2021	6.726	51.1	4.71	0.84	4.83	1.50

4. ՄԱԿԵՐՆՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՅՐԱՀԱՄ ՁՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2021 թվականի 3-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետերում, այդ թվում՝ 82 գետային, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ, ջրի էլքի չափումներ): 57 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ, այդ տվյալների հիման վրա կազմվել են հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահառուների:

2021 թվականի 3-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 44 գետի, Արփի լիճ, Ախուրյանի, Ապարանի, Երևանյան լիճ, Ազատի և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատարների և Սևանա լճի 14 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հուլիսի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները:

Իրականացված դիտարկումների արդյունքները ներկայացված են Աղյուսակ 6-15-ում և Հավելված 3-ում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 109 ստորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 25 շատրվանող հորատանցք, 44 չշատրվանող հորատանցք և 41 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումը կատարվում է տարին 2 անգամ՝ մայիս և նոյեմբեր ամիսներին՝ 51 դիտակետերից:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերի ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Վանաձոր	1.95	4.23	46	1.68	2.70	62	1.83	2.86	64
Դեբեդ	Այրում	15.0	33.3	45	13.2	20.8	64	11.5	18.7	61
Չորագետ	Գարգառ	8.84	16.1	55	8.70	11.2	77	6.73	9.98	67
Աղստև	Իջևան	3.97	8.55	46	2.77	5.34	52	2.50	4.62	54
Գետիկ	Գոշ	1.81	2.73	66	1.43	1.63	88	1.30	1.56	84

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև օգոստոսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Մալիտակ քաղաքից ներքև երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Վանաձոր քաղաքից վերև հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Այրում քաղաքից վերև երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Սահմանի մոտ հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավանից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկայից վերև օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Մարատովկայից ներքև հատվածում ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):


Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Գարգառ գետի ջրի որակը ակունքում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):



Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «լավ» (2-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև հուլիս և օգոստոս ամիսներին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Իջևան քաղաքից վերև հուլիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս): Իջևան քաղաքից ներքև ջրի որակը հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս):










Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Հադարծինի N2058 և N2059 դիտակետերում նկատվել են ծախսի իջեցումներ:





ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՐ ԼՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▲ Ոռակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▲ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք
- Մակերևութային ջրերի որակի դասեր
 - 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



Ախտորյանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախտորյանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ դիտակետերից երկուսի ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Ախտորյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախտորյան	Ախտորիկ	5.17	5.62	92	7.29	7.01	104	5.01	5.99	84
Մեծամոր	Մեծամոր	1.88	12.4	15	1.70	11.9	14	1.70	14.7	12

Մակերևութային ջրերի որակ


Ախտորյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:


Ախտորյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև հատվածում հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գյումրի քաղաքից վերև ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Գյումրի քաղաքից ներքև ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս): Բագարան գյուղից ներքև ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայեյյան գյուղից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):





Ստորերկրյա քաղցրահամ ջրեր


Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 39 դիտակետում՝ 11 բնաղբյուրում, 7 շատրվանող և 21 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:




Արարատյան արտեզյան ավազանում ճնշումային հորատանցքերում՝ N 2001 (Ակնաշեն), N1521 (Գայ), N2002 (Տարոնիկ) և N2021 (Ջրառատ) տարվա սկզբի հետ համեմատ նկատվում է ծախսերի իջեցում 0.3 – 0.8 լ/վ սահմաններում, սակայն 3-րդ եռամսյակում ծախսերը կայունացել են:

Արմավիրի մարզի Եղեգնուտ, Ակնաշեն, Ապագա, Վարդանաշեն, Արագափ, Տարոնիկ, Բամբակաշատ, Հայկավան (NN 105, 108, 152, 192, 1533, 1537, 2018, 2024, 2025, 2026, 2055 և 2057) համայնքների հորատանցքերում նկատվել են մակարդակների կտրուկ իջեցումներ կապված ոռոգման շրջանում պոմպերի շուրջօրյա աշխատանքով:

Մակարդակի աննշան իջեցումներ են նկատվում Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու դիտակետերում՝ Արտենիի N2081, Մյասնիկյանի N2082 և Արտամետի N2083:


Շիրակի մարզի Աշոցքի N2039, N2040 և Ցողամարզի N2077 դիտակետերում նկատվում է աղբյուրների ծախսերի իջեցում՝ 0.1- 0.9լ/վ: Ծախսի իջեցում է նկատվում նաև N2031 (Գյումրի), N2032 և N2035 (Մարմաշեն) աղբյուրների դիտակետերում: Առափիի N2042 դիտակետի ջրհորում ջրի մակարդակը իջել է 30 սմ-ով, իսկ Ախուրյանի N2043 դիտակետի ջրհորում այն բարձրացել է 90 սմ-ով:






Չատրվանող հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ







Գրունտային ջրհորներ

Ախուրյանի ՋԿՏ



ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- ▲ Քաղաքներ
- ▲ Բնակավայրեր
- ▲ Դակերևութային ջրերի Որակի մոնիթորինգի դիտակետեր
- ▲ Հիդրոլոգիական դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Ախուրյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 8. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	3.52	4.99	71	3.93	3.73	105	2.19	3.47	63
Հրազդան	Արգել	1.76	3.33	53	1.98	3.12	63	2.39	3.18	75
Հրազդան	Երևան	2.27	3.13	72	2.05	2.80	73	2.00	2.59	77
Մարմարիկ	Հանքավան	0.66	1.23	54	0.64	0.57	113	0.64	0.47	135
Մարմարիկ	Աղավնաձոր	2.36	3.37	70	2.42	1.85	131	1.17	1.51	77
Քասախ	Վարդենիս	0.21	0.71	30	0.22	0.49	45	0.32	0.54	59
Քասախ	Աշտարակ	3.46	3.45	100	3.01	3.46	87	2.26	2.64	86

Մակերևութային ջրերի որակ

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Աշտարակ քաղաքից վերև հատվածում ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Աշտարակ քաղաքից ներքև հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):




Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հատվածում օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Քաղսի գյուղից ներքև և Արգել գյուղից ներքև հատվածներում ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Հրազդան գետի գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս):

Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում հուլիս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):





Ստորերկրյա քաղցրահամ ջրեր




Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 27 դիտակետերում, այդ թվում՝ 6 բնաղբյուրում, 9 շատրվանող և 12 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:



Արարատյան արտեզյան ավազանի (ՍԻս, Հայանիստ, Գրիբոյեդով) հորատանցքերում I կիսամյակի հետ համեմատ NN 78, 2005, և 2056 դիտակետերում նկատվում է ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումներ մինչև 0.5 մետր: Համեմատաբար կայուն ծախս է նկատվում N1535, N1536 (ՍԻս) և N1519 (Մասիս) հորատանցքերում: Հովտաշենի N2008 և N2053 դիտակետերում I կիսամյակի հետ համեմատ ծախսերը նվազել են մինչև 50 տոկոսով:

Մակարդակների աննշան իջեցումներ են նկատվում նաև Արարատյան արտեզյան ավազանի նախալեռնային գոտու N2085 Արագած, N2086 Դոդս, N2087 Աղավնատուն, N2088 Լեռնամերձ դիտակետերում:



Հրազդան գետի Բջնի-Սոլակ հատվածում գտնվող N246, N1297 և N1832 աղբյուրներում III եռամսյակում նկատվում են ծախսերի իջեցումներ:

Նիգավանի N2010, N2011 և Խորոնքի N2023 ջրհորերում գրունտային ջրերի մակարդակներն իջել են 0.3-1.2մ-ով: Ծախսի անշան ավելացում է նկատվում Ապարանի N2051 «Սիրո» աղբյուր դիտակետում:





ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարգինետրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Մառերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ջկնագետ	Ծովագյուղ	0.24	0.52	46	0.16	0.28	58	0.17	0.26	64
Մասրիկ	Ծովակ	1.53	2.65	58	1.53	2.41	64	1.61	2.72	59
Մարտունի	Գեղհովիտ	0.48	2.13	23	0.49	0.70	69	0.58	0.64	90
Արգիճի	Վ. Գետաշեն	0.50	2.79	18	0.56	1.41	40	1.27	1.65	77
Գավառագետ	Նորատուս	2.94	2.86	103	3.16	2.38	133	3.26	2.70	121

Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ջկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հուլիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում հուլիսին և սեպտեմբերին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), օգոստոսին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում սեպտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում հուլիսին և օգոստոսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):


Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները.



Ստորերկրյա քաղցրահամ ջրեր


Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 16 դիտակետում՝ 5 բնադրյուրում, 6 շատրվանող և 5 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Ակունքի N31, N902, N1053 աղբյուրներում և Վարդենիսի, Գանձակի շատրվանող հորատանցքերում (N1809, N2013) նկատվել են ստորերկրյա ջրի ծախսի իջեցումներ: Վարդենիսի N1811 և Վաղաշենի N2090 հորատանցքերում ծախսը կայուն է: Գավառի N2014 աղբյուրի ծախսը ավելացել է 0.15 լ/վ-ով:




Շատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ

Սեանի ՋԿՏ



Շատրվանող հորատանցքեր
Ծախս, լ/վ

Սեանի ՋԿՏ



Սևանա լիճ

2021 թվականի 3-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 10. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2021 թվականի 3-րդ եռամսյակում Հուլիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	8.27	8.12	8.32	24.71	21.2	48.1	106.3
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	3.07	2.44	1.69	7.20	0.00	17.9	49.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	26.4	16.3	12.6	55.3	5.30	50.5	122.6
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.20	10.2
Ընդամենը	40.34	29.46	25.31	95.11	50.8	116.3	220.3
ԵԼՔ							
Հրազդան գետով	28.74	19.79	20.42	68.95	20.4	84.5	150.2
Գոլորշացում լճի մակերևույթից	40.5	43.8	53.2	137.5	73.0	116.2	159.4
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.50	1.10	1.70
Ընդամենը	69.64	63.99	74.02	207.65	99.0	206.5	265.4
Կուտակում (նվազում)	-38.5	-12.8	-38.6	-89.9	-265.5	-86.5	110.3
Բացարձակ անկապք	9.20	-21.73	-10.11	-22.64		-3.30	
Հարաբերական անկապք %	11.7	34.0	13.7	10.9	0.10	5.90	26.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.79	1281.258	38.5486
Ամսվա վերջին օրը	1900.72	1280.595	38.4587
Միջին ամսական	1900.75	1280.879	38.4973

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.07 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.21 31.07.21 ընթացքում 0.20 (մ)
 31.07.21 և 31.07.20 մակարդակի տարբերությունը -0.03մ

Օգոստոս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	8.12	8.52	9.19	25.83	16.3	30.3	52.8
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	1.47	1.21	1.33	4.01	0.00	9.20	26.6
Տեղումները լճի մակերևույթի վրա	6.90	16.6	5.00	28.5	2.60	35.1	148.0
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.10	6.60	12.3
Ընդամենը	19.09	28.93	18.22	66.24	26.2	76.6	197.8
ԵԼՔ							
Հրազդան գետով	18.99	9.42	19.54	47.95	42.1	90.6	150.5
Գոլորշացում լճի մակերևույթից	53.6	58.9	48.8	161.3	100.5	146.8	212.3
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.14	1.70
Ընդամենը	72.99	68.72	68.74	210.45	151.6	246.6	342.3
Կուտակում (նվազում)	-38.5	-38.5	-51.3	-128.3	-270.6	-162.7	20.0
Բացարձակ անկապք	-15.40	-1.29	0.78	-15.91		-8.60	
Հարաբերական անկապք %	21.1	1.88	1.12	7.56	0.10	4.70	25.2

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.72	1280.595	38.4587
Ամսվա վերջին օրը	1900.62	1279.648	38.3304
Միջին ամսական	1900.67	1280.122	38.3946

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում

-0.10 (մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.21 31.08.21 ընթացքում

0.10 (մ)

31.08.21 և 31.08.20 մակարդակի տարբերությունը

-0.06 (մ)

Մեպտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2020թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	8.19	8.84	10.26	27.29	21.3	31.6	57.8
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	1.30	1.39	2.15	4.84	0.00	7.32	18.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	0.50	5.90	14.6	21.0	1.10	30.5	106.7
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	4.10	6.50	12.3
Ընդամենը	12.59	18.73	29.61	60.93	34.5	73.2	169.7
ԵԼՔ							
Հրազդան գետով	19.82	12.25	3.15	35.22	0.62	52.1	153.0
Գոլորշացում լճի մակերևույթից	67.5	55.8	59.8	183.1	117.0	158.3	190.9
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	87.72	68.45	63.35	219.52	130.3	228.5	325.7
Կուտակում (նվազում)	-25.7	-38.5	-25.7	-89.9	-244.50	-152.1	19.0
Բացարձակ անկապ	-49.43	-11.22	-8.04	-68.69		0.50	
Հարաբերական անկապ %	56.3	16.4	12.7	31.3	0.20	4.40	41.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.61	1279.554	38.3176
Ամսվա վերջին օրը	1900.54	1278.891	38.2277
Միջին ամսական	1900.58	1279.270	38.2790

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում

-0.07 (մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.21 30.09.21 ընթացքում

0.02 (մ)

30.09.21 և 30.09.20 մակարդակի տարբերությունը

-0.10 (մ)

2021 թվականի հուլիսի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.79մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 5սմ-ով: 2021 թվականի հուլիսի 31-ին լճի մակարդակը կազմել է 1900.72մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 3սմ-ով, օգոստոսի 31-ին՝ 1900.62մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 6սմ-ով, իսկ սեպտեմբերի 30-ին կազմել է 1900.54մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 10սմ-ով: 2021 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը լճի մակարդակը իջել է 25 սմ-ով:

Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործած ջրի ծավալը հուլիս ամսին կազմել է 7.198 մլն մ³, օգոստոսին՝ 4.007 մլն մ³, սեպտեմբերին՝ 4.844 մլն մ³:



2021 թվականի հուլիսի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1281.258 կմ², ծավալը՝ 38.5486 կմ³, իսկ եռամսյակի վերջին օրը՝ սեպտեմբերի 30-ին համապատասխանաբար՝ 1278.891 կմ² և 38.2277 կմ³:





2021 թվականի հուլիսի 1-ին Մեծ Սևանի ծավալը կազմել է 24.3617կմ³, Փոքր Սևանինը՝ 14.1869կմ³, իսկ սեպտեմբերի 30-ին համապատասխանաբար՝ 24.1259կմ³ և 14.1018կմ³:

Սևանա լճից ոռոգման նպատակով բաց թողնված ջրի ծավալը հուլիսին կազմել է՝ 68.945 մլն մ³, օգոստոսին՝ 47.955 մլն մ³, սեպտեմբերի՝ 35.220 մլն մ³:

Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի որակի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն այսուհետ կիրականացվի 2021 թվականի հուլիսի 22-ի ՀՀ կառավարության N1211-Ն որոշման Հավելված 1-ի համաձայն: Երեք ամիսների ընթացքում Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են (*Աղյուսակ 11*):

Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.





Աղյուսակ 11. Սևանա լճի ջրի որակը 2021 թվականի 3-րդ եռամսյակում
Հուլիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 5մ խորություն	Նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Մեծ Սևան, 20մ խորություն	ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	Ֆոսֆատ իոն, մանգան, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Մանգան	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	Նիտրիտ իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրատ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	Նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	Ֆոսֆատ իոն	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ՀԱԱ	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փոքր Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն, մանգան, ԸԱԱ</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրատ իոն</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	

Օգոստոս

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Մեծ Սևան, 0.5մ խորություն</i>	<i>Նիտրատ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 25մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	



<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Մեծ Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Ֆոսֆատ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 5մ խորություն</i>	-	<i>2-րդ</i>	<i>2-րդ</i>
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր, ՀԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ՀԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>Բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ՀԱԱ</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, մոլիբդեն, բոր, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	

Մեպստեմբեր

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Մեծ Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, երկաթ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, երկաթ, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Մեծ Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, երկաթ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 25մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, երկաթ, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 0.5մ խորություն</i>	-	<i>2-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>


<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում, իոն, նիտրիտ իոն, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, մանգան, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն, Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն, մանգան, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրատ իոն, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Մանգան</i>	<i>5-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>Ամոնիում իոն, նիտրատ իոն, բոր, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ֆոսֆատ իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն, մանգան</i>	<i>5-րդ</i>	

ՀՀ Սեանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
 - Բաղաքներ
 - Բնակավայրեր
 - ▲ Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▲ Մտորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
 - Գետային ցանց
 - 22 պետական սահման
 - Լճեր և ջրամբարներ
 - Սեանի ջրավազանային կառավարման տարածք

2-րդ	«շալի»	
3-րդ	«միջալի»	
4-րդ	«անբախ/սպառ»	
5-րդ	«վատ»	



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ագատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ագատ	Գառնի	1.11	3.29	34	1.02	2.61	39	1.01	2.67	38
Վեղի	Ուրցաձոր	0.10	0.59	18	0.019	0.34	6	0.021	0.33	6
Արփա	Ջերմուկ	2.37	4.64	51	1.69	3.07	55	1.78	2.74	65
Արփա	Արենի	3.37	7.50	45	3.53	4.63	76	3.82	5.48	70

Մակերևութային ջրերի որակ

Արարատյան ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 13 դիտակետում:

Վեղի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Վայք քաղաքից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը ակունքում օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):




Ստորերկրյա քաղցրահամ ջրեր




Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 23 դիտակետում՝ 10 բնաղբյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Մալիշկա (N502), Գառնիի (N2045, N2046) համայնքի դիտակետերում հուլիս-սեպտեմբեր ամիսներին նկատվում է ծախսի ավելացում, իսկ Ջեղեա (N2050), Եղեգնաձոր



(N787), Ջերմուկի (N2048), Կեչուտ (N2060) դիտակետերում՝ նվազում: Ագարակաձորի (N785) դիտակետում աննշան փոփոխություններով ծախսը կայուն է:

Արարատի մարզի Սուրենավանի N2067 դիտակետում նկատվում է ծախսի ավելացում: Համեմատաբար ջրի մակարդակի կայուն վիճակ է Եղեգնավանի N2065 (թույլ իջեցումներով), Արարատի N2076 և Լուսառատի N2074 (թույլ բարձրացում) դիտակետերում: Դալարի N2072 դիտակետում գրունտային ջրերի մակարդակը բարձրացել է 0.6 մետրով:







ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▲ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▲ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▲ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
- Մակերևութային ջրերի որակի դասեր
 - 2-րդ դաս



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 13. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ³/վ								
		հուլիս			օգոստոս			սեպտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեղրիգետ	Մեղրի	0.49	4.36	11	0.063	1.40	5	0.037	0.80	5
Ողջի	Կապան	2.17	8.29	26	1.22	3.44	35	1.21	2.42	50
Որոտան	Գորայք	1.73	3.71	47	1.76	2.47	71	1.95	2.23	87

Մակերևութային ջրերի որակ

Հարավային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 21 դիտակետում:

Կարճևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի ջրի որակը Քաջարան քաղաքից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաջարան քաղաքից ներքև հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Կապան քաղաքից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Կապանի օդանավակայանից ներքև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը Գորայք գյուղից վերև հատվածում օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Սիսիան քաղաքից վերև ջրի որակը սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սիսիան քաղաքից ներքև օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Տաթև ՀԷԿ-ից ներքև հատվածում ջրի որակը օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հատվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքից հաստվածում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը:

Գորայք N529, Շաքի N532, Գորիս, N899 Անգեղակոթ N1323 համայնքների դիտակետերում նկատվում են համեմատաբար կայուն ծախսեր, ավելացման միտումով: Իսկ Սպանդարյան N537, Անգեղակոթ N1175 և Գորիս N1399 դիտակետերում աղբյուրների ծախսը իջել է:



ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մաքցկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք
- Մակերևութային ջրերի որակի դասեր
 - 2-րդ դաս
 - 3-րդ դաս
 - 4-րդ դաս
 - 5-րդ դաս



Ջրամբարներ

Ախուրյանի, Արփի լիճ, Ագատի և Ապարանի ջրամբարներում իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:



2021 թվականի 3-րդ եռամսյակում ջրամբարների լցվածությունների մեծությունները եռամսյակի ամիսների վերջին օրերի դրությամբ ներկայացված են հաջորդող աղյուսակում.

Աղյուսակ 14. Ջրամբարների ջրալցվածությունը. 2021 թվականի 3-րդ եռամսյակում

Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը. մլն. խոր.մ	Փաստացի լցվածությունը, Հուլիսի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, օգոստոսի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, սեպտեմբերի 30-ի դրությամբ	
		ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	108.27	21	23.36	4	23.15	4
Արփի լիճ	105	42.80	41	22.50	21	14.50	14
Ագատ	70	25.51	36	16.75	24	13.10	19
Ապարան	91	23.53	26	14.57	16	10.28	11
Մարմարիկ	24	5.54	23	1.10	5	1.29	5

Ջրամբարների ջրի որակ

Արփի լիճ ջրամբարի ջրի որակը երեք ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Ախուրյանի ջրամբարի ջրի որակը հուլիս և օգոստոս ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ապարանի ջրամբարի ջրի որակը օգոստոսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ագատի ջրամբարի ջրի որակը հուլիս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Կեչուտի ջրամբարի ջրի որակը օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):



**Աղյուսակ 15. Ջրամբարների ջրի որակը 2021թ. 3-րդ եռամսյակում.
Հուլիս**

Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Արփի լճի ջրամբար (109)	ամբարտակի մոտ	ԹՔՊ, ամոնիում իոն	3-րդ	4-րդ
		ԿՆ	4-րդ	
Ախուրյանի ջրամբար (110)	ամբարտակի մոտ	Նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
Երևանյան լիճ ջրամբար (112)	ամբարտակի մոտ	Լուծված թթվածին, ֆոսֆատ իոն, ԸՍԱ	3-րդ	5-րդ
		Ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
		Ամոնիում իոն, նիտրիտ իոն	5-րդ	
Ազատի ջրամբար (113)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Օգոստոս

Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Արփի լճի ջրամբար (109)	ամբարտակի մոտ	ԹՔՊ, ամոնիում իոն	3-րդ	4-րդ
		ԿՆ	4-րդ	
Ախուրյանի ջրամբար (110)	ամբարտակի մոտ	Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Ապարանի ջրամբար (111)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Մեկտեսներ

<i>Ջրային ռեսուրս</i>	<i>Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դասը</i>	<i>Ջրի որակի բնութագրական դասը</i>
<i>Արփի լճի ջրամբար (109)</i>	<i>ամբարտակի մոտ</i>	<i>ԿՆ</i>	<i>4-րդ</i>	<i>4-րդ</i>
<i>Ախուրյանի ջրամբար (110)</i>	<i>ամբարտակի մոտ</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
		<i>ԿՆ</i>	<i>4-րդ</i>	
<i>Ապարանի ջրամբար (111)</i>	<i>ամբարտակի մոտ</i>	<i>Լուծված թթվածին</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Երևանյան լիճ ջրամբար (112)</i>	<i>ամբարտակի մոտ</i>	<i>Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԼՍԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
		<i>Ամոնիում իոն, բնդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
<i>Ազատի ջրամբար (113)</i>	<i>ամբարտակի մոտ</i>	<i>-</i>	<i>2-րդ</i>	<i>2-րդ</i>
<i>Կեչուտի ջրամբար (114)</i>	<i>ամբարտակի մոտ</i>	<i>-</i>	<i>2-րդ</i>	<i>2-րդ</i>

Աղյուսակ 16. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2021 թվականի 3-րդ եռամսյակում
Հուլիս

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)												
	Թթվածնի քիմիական պահանջ, ՄԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Ցինկ, ՄԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՄԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	1.2	1.6	1.7	—	6.7	31.7	23.5	6.6	34.6	16.8	5.6	80.5	74.4
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	—	2.4	2.7	1.6	—	3.8	5.5	—	8.0	10.1	1.3	7.8	—
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	1.2	3.9	8.0	1.8	—	3.2	4.3	—	6.8	11.1	—	4.6	—
Արարատից քաղաքից 0.5 կմ ներքև (28)	—	1.5	10.0	1.8	—	2.6	2.1	—	5.3	11.3	—	2.7	—
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	1.5	3.3	5.1	2.4	—	2.3	3.6	—	3.1	9.4	—	5.2	2.4
Ագարակ քաղաքից 2.5 կմ հարավ-արևելք ((30) AMS-2)	1.2	6.6	5.1	2.4	—	16.0	3.4	—	4.2	11.1	1.4	11.5	2.5
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	—	4.9	4.1	2.4	1.5	50.1	3.5	—	11.0	16.2	5.5	23.5	3.2

Օգոստոս

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)										
	Թթվածնի քիմիական պահանջ, ՄԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Մուլֆատ իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՄԹԿ=0,01 մգ/լ	Մոլիբդեն, ՄԹԿ=0,5 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	–	–	–	5.9	5.0	1.2	–	9.3	10.4	2.0	20.1
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	2.3	–	2.3	3.3	6.1	–	–	3.8	15.1	–	3.1
Ագարակ քաղաքից 2.5 կմ հարավ-արևելք ((30) AMS-2)	2.0	–	2.4	4.9	7.3	–	1.8	3.9	16.2	–	3.7
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	2.0	1.4	2.3	7.5	11.3	–	–	3.3	16.1	–	2.8

Մեպտեմբեր

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)											
	Թթվածնի քիմիական պահանջ, ՄԹԿ=30 մգ/լ	Ամոնիումի իոն, ՄԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Ցինկ, ՄԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0,001 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0,001 մգ/լ
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	1.2	–	–	–	–	3.2	3.1	6.5	9.3	–	7.6	–
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	–	3.8	4.1	1.4	–	3.6	6.3	8.1	17.6	1.7	20.3	–
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	–	5.2	7.0	1.4	–	3.5	6.0	7.3	17.8	1.4	16.0	–
Արարատից քաղաքից 0.5 կմ ներքև (28)	–	6.9	8.5	1.4	–	3.6	5.1	4.7	16.9	1.2	12.6	–
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	–	2.5	–	2.2	–	3.4	4.1	5.6	15.3	–	3.2	3.7
Ագարակ քաղաքից 2.5 կմ հարավ-արևելք ((30) AMS-2)	–	–	–	2.2	–	15.1	4.5	7.3	15.7	1.4	7.0	3.8
Մեղրի գետի թափման կետից վերև (AMS-3)	1.5	–	–	2.2	1.4	56.6	4.2	14.1	19.2	5.5	16.1	3.6

5. ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ


Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝





- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- ժամանակակից գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

2021 թվականի 3-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Շիրակի մարզում: Ուսումնասիրված հողերում գերազանցում են վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.1 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-39.5 անգամ, նիկելի պարունակությունը՝ 6.0-37.8 անգամ, պղինձի պարունակությունը՝ 8.7-24.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.2-8.3 անգամ:





6. ԱՆՏԱՌՆԵՐ

Անտառապահականություն

2021 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում անտառապահականության վիճակի մասնակի դիտարկում-ուսումնասիրություններ են իրականացվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 6 անտառտնտեսություն մասնաճյուղերի սահմաններում (**«Սյունիք» ա/տ, «Ստեփանավան» ա/տ, «Վանաձոր» ա/տ, «Թումանյան» ա/տ, «Իջևան» ա/տ, «Արծվաբերդ» ա/տ**): Աշխատանքների ընթացքում վեր են հանվել նկատված խնդիրները և տրվել են համապատասխան առաջարկություններ: Ստորև ներկայացվում են արձանագրված խնդիրները՝

- Դաշտային դիտարկում-ուսումնասիրությունների իրականացման ընթացքում առկա խնդիրները տեղորոշվել են Trimble 3B և Trimble TDC100 դաշտային տեղորոշման սարքավորումներով:
- Արբանյակային պատկերների կիրառմամբ սաղարթում 2020-2021 թվականների փոփոխությունների նախնական բացահայտումն իրականացվել է մասնակի՝ պայմանավորված բուսականության վեգետացիոն պասիվ շրջանով և ամպամածությամբ:
- Վերոնշյալ անտառային տարածքներում հայտնաբերվել է ընդհանուր առմամբ 24 ապօրինի հատման օջախ: Նկատվել են նաև ապօրինի հատումներ, որոնք արդեն իսկ արձանագրված են եղել «Բնապահականության և ընդերքի տեսչական մարմնի» և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից:

Աղյուսակ 17. Ապօրինի հատման օջախները

<i>Անտառտնտեսություն</i>	<i>Օջախների քանակ (հատ)</i>
<i>Սյունիք</i>	-
<i>Ստեփանավան</i>	10
<i>Վանաձոր</i>	5
<i>Թումանյան</i>	5
<i>Իջևան</i>	-
<i>Արծվաբերդ</i>	4
<i>Ընդամենը</i>	24

- Հայտնաբերվել են Պաշտպանության նախարարության կարիքների համար հատված ծառեր, որոնք գտնվում էին արձանագրման փուլում:
- Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվել են նաև արմատախիլ, ջարդված, քամատապալ և ձյունակոտոր մի շարք ծառեր: Որոշ տարածքներում արբանյակային ուսումնասիրությունների ընթացքում առանձնացված որոշ փոփոխությունների պատճառները կապված են եղել նախորդ տարիների շահագործված հատատեղերերի, կամ նախորդ տարիներին իրականացված կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքների հետ:

Անտառխախտման արձանագրությունների ուսումնասիրություններ

